



22 (206). 09Ն ՈՒ ԱՂՎԵՍ

Օձն ու աղվես կէղնին ախպեր, գրնկնան ճամպա. ճամպին մեծ
դետի մեռասա գիկան:

Օձ կըսես.

— Աղվե՛ս ախպեր, ես լողալ գինամ, հմա քու գորա շըմ գինա,
յի՛մալ չընցնանք իգա չելման գետ, կը խեղգվի՛մ:

Աղվես կըսես.

— Էլ մեր ախպրութեն ո՞ր օրվա համար է. արի չելի շալակ-
ւի, դըրդի լե իմ հետ գընցում յն գեն:

Օձ գելնա աղվըսու շալակ, աղվես զինք կը թալե գետ. կը լողա,
դըռ կես շը հասած են, սձ ուր գլուխ գերկընցու, գուգե զաղվըսու
բոկ խեթե: Աղվես հրտ չեռին զօձու միտք գիմնա, խայիմ կը խածե
օձու բոկ, կը խեղգե, կը հանե գետի աղեղ, կը պարղե վըր ավղին,
կըսես.

— Ըշտե հմլա ախպրութեն, մկա գո՛ւզ գնա:

